ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԵԼ ԵՆ ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

25.12.2019 21:16

Իրավունքների պաշտպանության նախաձեռնությունն հիմնադրամը ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի հետ համատեղ **Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան ֆինանսավորմամբ իրականացվող «Ինստիտուցիոնալ և թիրախային մոտեցմամբ արդարադատության մատչելիության ծրագիր արևմտահայերեն խոսող ազգությամբ հայերի համար»** ծրագրի շրջանակներում հանրային պաշտպանների համար կազմակերպել են դասընթաց որի ընթացքում ծանոթացել են դասական ուղղագրության և արևմտահայերենի առանձնահատկություններին:

Դասընթացը վարում էր ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեսության և պատմության ամբիոնի առաջատար գիտաշխատող, արևմտահայերենի դասախոս Հակոբ Չոլակյանը:

Հանրային պաշտպաններին ներկայացվեցին արևելահայերենի և արևմտահայերենի լեզվական առանձնահատկությունները՝ պայմանավորված պատմաաշխարհագրական առանձնահատկություններով: Այնուհետև անցկացվել են զուգահեռներ, քննարկվել են հիմնական լեզվաբանական տարբերությունները և նմանությունները՝ ներառյալ քերականական կանոնները և գործնական իրավիճակային կիրառման ձևերը: Հատուկ ուշադրության են արժանացել, այնպիսի լեզվական կառուցվածքներ և բառեր, որոնք կարող են հակասական իմաստներ ունենալ և գործնական անորոշություններ առաջացնել հանրային պաշտպանների համար, հատկապես իրենց արևմտահայախոս շահառուների հետ հարաբերություններում:

Դասընթացի ընթացքում հանրային պաշտպանները իրականացրել են գործնական վարժություններ և առաջադրանքներ: Դասընթացի նյութերը՝ ներառյալ համապատասխան դասագրքերը և գործնական վարժությունները, շուտով հասանելի կլինեն հանրային պաշտպանի գրասենյակի կայքում:

Այս միջոցառումը գործնական մեծ նշանակություն է ունենալու բոլոր այն հանրային պաշտպանների և փաստաբանների համար, ովքեր իրավաբանական ծառայություններ են մատուցում արևմտահայ հայրենակիցներին: Այս քայլի նպատակներից է

արևմտահայերենի պահպանման և զարգացման օժանդակումը Հայաստանում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })